Արձանագրություն N 3
ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.02.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացության և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Տ.Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

1.1.1 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված <<էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի (այսուհետ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ <<ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 44 512 (քառասունչորս հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն (այսուհետ՝ պարտավորություն):

1.1.2 Հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- ***1-ին չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում

բացակայում է հավելված 2-ը,

հավելված 3-ում լրացված չէ <<ապրանքային նշան>> դաշտը, արտադրողի անվանման փոխարեն նշված է հավաքող ընկերության անվանումը, իսկ <<ծագման երկիր>> դաշտում պրոցեսորի վերաբերյալ տեղեկատվությունը հստակ չէ (***պրոցեսորը՝ Վիետնամի կամ Մալազիայի արտադրության է)***:

- ***2-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում

բացակայում է հավելված 2-ը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի չօգտագործված լինելու վերաբերյալ հավաստումը:

- ***3-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի որոշ տվյալներ հստակ չեն (տպելու որակը ***ոչ պակաս 4800x2400 dpi***, սկանավորման որակը ***ոչ պակաս 1200x2400 dpi***, տպելու և պատճենահանման արագությունը ***ոչ պակաս 32 էջ/րոպեում սև, 20 էջ/րոպեում գունավոր***):

- ***5-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Շատվոր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում

բացակայում է հավելված 2-ը,

մասնակցի կողմից հավելված 3-ով առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը հստակ չէ:

1.2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ, 47-րդ և 48-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- ***4-րդ չափաբաժնի մասով*** առաջին տեղը զբաղեցրած մասնակցի <<Տեխնոֆորում>> ՍՊԸ-ի հայտը մերժել և ծանուցել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի:

- ծանուցել յուրաքանչյուր չափաբաժնի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվեն բավարար: Հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ընթացակարգի շրջանակներում 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ն և վերջինիս վերաբերյալ հարցում է ներկայացվել Կոմիտե և ստացվել տեղեկատվություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ, կրկնակի հարցման անհրաժեշտությունը բացակայում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ.Ղուկասյան)

2.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու և գնահատելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան